

Մեռեալ մարմնով եւ կենդանի աստուածութեամբն. զի ասէ սուրբ հայրապետն Ներսէս ի կատարումն դաւանութեան իւրոյ, ի խոստովանիմն¹².

Ոչ ոմն անմահ եւ ոմն մեռեալ,
Զի այս երկուքն են բաժանեալ.
Այլ որ անմահ, նոյն եւ մեռեալ.
Եւ որ մեռեալ՝ անմահ մնացեալ.

զի

Որպէս ծընունդն սքանչելի
Նոյնպէս եւ մահն հրաշալի.
Եւ երկոքեանն անքննելի,
Զի Աստուծոյ է արարչի:

Ով սիրելի, դու ասես՝ Մեռեալ մարմնով եւ կենդանի աստուածութեամբ, զի ջուր կողին Քրիստոսի զմեռելութիւն մարմնոյն նշանակէր. եւ արիւնն զի՞նչ նշանակէր. թէ ասես¹³ զկենդանութիւն անմարմին աստուածութեան, նա անմարմին աստուածութիւն ոչ ունի արիւն, այլ մարմին էր կենդանի. որպէս վերոյ ասաց. որպէս ասէ. Մերով բնութեամբս մեռանի, Աստուած անմահ խոստովանի. զայդ հերձուածն ոչ ընդունէ ի դաւանութիւն Նիկիայի. զի ասէ միայն զայս թէ Չարհարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. եւ Ներսէս ասէ. Սաչեցար, թաղեցար եւ յարեար: Եւ թէ կամիս

¹² Ներսիսի Շնորհաւոյ Չափարեբաղանք: Վենետիկ 1830, էջ 210. Բան Հաւատոյ, տ. 1068—1075:

¹³ Զ. ասէ: